



ՊԵՏՐՈՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԵՐՔԵՐՅԱՆ

## ԿՈՄԻՏԵԱՎ ՎՄՐԴԱՊԵՏԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԻՊ ԷԶԵՐԸ

**Ա**միտաս վարդապետը, իր մանկության օրերից, սնվել է և մեծացել հոգևոր միջավայրում: Նրա երգերի առաջին թոթովանքները կազմվել են հոգևոր երգեցողության ազդեցության տակ և նրա մտքի ու հոգու կազմավորման տասն և ավելի տարիները անցել են հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մեղեդիների աշխարհում, երաժշտականորեն առավել լափով անաղարտ մնացած Ս. էջմիածնում:

Երբ պատանի Սողոմոնը, ապագա Կոմիտաս վարդապետը, որպես ուսանող ոտք էր դնում Ս. էջմիածնի Գևորգյան ճեմարանը, Գևորգ Դ Մեծագործ կաթողիկոսը մասնավոր ուշադրություն էր դարձնում էջմիածնի հայ եկեղեցական երաժշտությունը գտելու և լավ հիմքերի վրա դնելու համար:

Ձայնագրության առաջին դասերը ուսանող Սողոմոնը ստանում է ժամանակի Մայր Աթոռի երաժշտապետներից, Գեռես սարկավազ, նա ժողովրդական և եկեղեցական երգեր է ձայնագրում և ուսումնասիրություններ է հրապարակում հայոց եկեղեցական եղանակների մասին: Այնուհետև նա, որպես հմուտ երաժշտագետ, եկեղեցական երաժշտության մեջ խորացնում է իր ուսումնասիրությունները:

Ահա այդ հոգիածաշարքերը մնում են մինչև այսօր իրրև լավագույն հայտնաբերումները մեր ժողովրդական եկեղեցական երաժշտության: Պատմությունը գրեթե լռել է և ոչինչ չի հաղորդել հայ եկեղեցական եղանակների, ինչպես և խաղերի մասին: Կոմիտաս վարդապետը նոր ճանապարհ հարթեց հայ հոգևոր երաժշտության քնազավառում,

որով հայտնաբերեց մեր հոգևոր երգերի յուրահատուկ կառուցվածքի ընդհանուր հատկանիշները և փաստեց, որ հայ ժողովուրդն ունի ուրույն զգալի նարազատ երաժշտություն, ճիշտ այնպես, ինչպես Թորոս Թորամանյանը մեր պատմական հուշարձանների ուսումնասիրության մր ապացուցեց հայ ճարտարապետության ինքնուրույնությունը: Ոչ ոք սակայն Կոմիտաս վարդապետից հետո չի կարողացել հասնել նրա ստեղծագործ հանճարի թուրքի խոյանքին և հայ մեղեդին ներդաշնակելու այն պատկերավոր, զունեղ և իմաստալից ձևով տալու արվեստին: Այս է պատճառը, որ մենք այսօր Կոմիտաս վարդապետի երաժշտական վաստակը Ս. Մեսրոպի կատարած գործին մոտեցնելու համարձակությունն ենք ունենում: Ս. Սահակը և Ս. Մեսրոպը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալիս, Գրիգոր Տաթևացին և մեր օրերի Կոմիտասը, իրենց ստեղծագործական ներշնչումն ստացել են հայ ժողովրդի հոգևոր ակունքներից և իրենց նպատակը դարձրել հայ ժողովրդի հոգևոր կյանքի ազնվացումը և զգալի ուրույն մշակույթի ծաղկումը: Առանց Գևորգյան ճեմարանի, առանց Ս. էջմիածնի, Հայաստանյայց եկեղեցին և ժողովուրդը պիտի լուռնանային Կոմիտասին:

Այսօր, Հայկական ՍՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասյան արխիվում ի մի է հավաքվել և գուրգուրանքով է պահպանվում Կոմիտաս վարդապետի երաժշտական ստեղծագործության զգալի մասը՝ գիտական-տեսական ուսումնասիրություններ և երաժշտական քաղմաթիվ մշակումներ, այդ թվում եկեղեցական երաժշտության վերաբե-

րող բազմաթիվ էջեր, որոնցից շատերը իրենց վերջնական դաշնավորումներով:

Կոմիտասյան արխիվում կան նաև շարականների և հոգևոր երգերի տարբեր մշակման անավարտ սևագրություններ: Կոմիտաս վարդապետը դժբախտաբար չի տվել դրանց ավարտված վերջնական ձևավորումներ:

Կոմիտաս վարդապետի ընդհանուր երաժշտական հարուստ վաստակի մեջ գգալի

ղեցական երաժշտության վերաբերյալ կատարած ուսումնասիրությունները, ինչպես և ժողովրդական երաժշտության վերաբերյալ այն հոդվածները, որոնցում շոշափված են նաև եկեղեցական երաժշտության հարցեր, և թվել եկեղեցական երաժշտության Կոմիտասյան մշակումների հրատարակված 6 անտիպ էջեր, արխիվային նյութերի հիման վրա:



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ

(Աուսանկարված 1898 թ. փետրվարի 20-ին: Քիֆլիսում)

մասն են կազմում մեր եկեղեցական երաժշտության նվիրված ուսումնասիրությունները, որոնք անկասկած գիտական մեծ արժեք ունեն, քանի որ լրացնում են մեր պատկերացումը հայ ժողովրդի ընդհանուր մշակույթի մասին:

Մեր նպատակն է սույն հոդվածում նշել Կոմիտաս վարդապետի մասնավորապես հիկ-

1894 թվականին առաջին անգամ Կոմիտաս վարդապետը «Հայոց եկեղեցական հղանակները» իր անդրանիկ հոդվածում զբաղվել է հայ եկեղեցական երաժշտության կարևոր խնդիրներով<sup>1</sup>:

<sup>1</sup> «Տես «Արարատ», 1894 հուլիս—օգոստոս, էջ 222—227 և 258.



ԲԶ Նոյն և նման Հօր և Որդւոյ,  
 Հոգիդ անեղ և համագոյ,  
 Բղխումըն Հօր անքնաբար...  
 Առեր յՈրդւոյ անճառաբար...  
 Արձակ քանաստեղծութեան օրինակ.  
 Ապաշխարութեան Օրհնութիւն.  
 Ակ Սով կենցաղոյս հանապազ զիս

ալեկոծէ,  
 Մըրըրկեալ ալիք թըշնամին ինձ  
 արուցանէ.  
 Նաւապետ բարի լեր անձին իմոյ

ապաւէնս:  
 Կոմիտաս վարդապետը եկեղեցական հոգևոր, ընդհանուր եղանակները գումարելով շարականների եղանակների թվին, հաշվում է 160 + 40 = 200:

1897 թվականին Կոմիտաս վարդապետը նորից անդրադառնում է եկեղեցական երաժշտության խնդիրներին աճալ եկեղեցական երաժշտությունը ԺԹ դարումն հոգվածում<sup>3</sup>, ուր խոսում է նաև 1839—1874 թվականներին Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայկական ձայնախնայներով շարականների ձայնագրումների և երաժշտական ժողովների մասին:

1898 թվականին Կոմիտաս վարդապետը, Մակար Սկամայանի «Երգեցողութիւնք Ս. Պատարագի» աշխատության հրատարակության առթիվ դրած քննադատական հոդվածում<sup>4</sup> հայտնաբերում է, որ մեր հոգևոր երգերը «ելնէջ» լուսնն, այլ կազմված են քառյակների գոությամբ՝ Քառյակների դրությամբ են հորինված մեր թե՛ ժողովրդական թե՛ եկեղեցական եղանակները, որոնք ջուր եղբայրներ են և նույն կազմությունն ունեն: Քառյակների դրութեան շենթարկվողները օտարամուտ են: «Այսպես զուր քանք կլինեն, եթե եվրոպական majeure, mineur կամ dure molle ձևերին համապատասխանող ելնէջներ որոնեինք մեր երաժշտության մեջն էլ: Երաժշտական հիմունքներով որոնել և գտնել ժողովրդի մը երգեցողության կանոնները ավելի արժեք քան ստեղծագործությամբ նոր ինքնատիպ գործ մը: Կոմիտաս վարդապետի այս վերլուծումները մնում են իբրև անժխտելի օրենք մեր ժողովրդի թե՛ հոգևոր թե՛ ժողովրդական երգերի կառուցվածքի համար:

1898 թվականին Կոմիտաս վարդապետը մի լուրջ ուսումնասիրություն հրատարակեց աճալ եկեղեցական երաժշտությունն վերնագրով գերմանական «Sammelbände der internationalen Musikgesellschaft հանդե-

սում (էջ 54—64), Թեոլին: Հոգվածում Կոմիտաս վարդապետը մի անգամ ևս շեշտում է մեր երաժշտության մեջ քրատարների սխտեմը: այնուհետև հանդամանորեն խոսում է եկեղեցում ընթերցվող գրականության ժամանակ սաղմոսերգության, քարոզների, երաժշտական տեղությունների նշանների, առգանությունների, կետադրության ձևերի մասին:

Այս առնչությամբ հայ առողանությունը բոլոր նշանները իրենց լրիվ արժեքներով ցույց են տրված իրենց գործածության կերպի մեջ. այսպես՝ շեշտ, հարցանիշ, միջակետ, ստորակետ, բութ, վերջակետ. Երաժշտական նախադասության մեջ ի՞նչ արժեք են ներկայացրել նրանք, և եթե այդ արժեքը ինքն իրեն իրագործի, ինչքանո՞վ պահում է բաների լեզվական կանոնները և համաձայնում երաժշտության հետ, որ ոչ բառը և ոչ էլ երաժշտական շեշտը խորթ լինեն բառի և եղանակի իմաստի արտահայտության:

Այս հոդվածի շնորհիվ օտարները լայնորեն ծանոթացան հայ եկեղեցական երաժշտության և նրա առանձնահատկություններին:

1905 թվականին Կոմիտաս վարդապետը Քիֆլիսի Հովնանյան դպրոցի դահլիճում կարդում է ազգային երաժշտության մասին մի դասախոսություն աճալ ժողովրդական և եկեղեցական երգերը՝ վերնագրով<sup>5</sup>, ուր շեշտում է, որ սՄեր երաժշտությունը երկու գլխավոր խմբի է բաժանվում, 1. եկեղեցական, 2. աշխարհական կամ ավելի ուղիղն ասած ժողովրդական: Այս երկու խմբի եղանակները այն հատկանշական երևույթն են ներկայացնում, որ կ'աչանք և՛ խոսքը, կամ ուրիշ բաներով երաժշտությունը և քանաստեղծությունը միաժամանակ և միևնույն անձի ստեղծագործության կնիքն են կրում:

1913 թվականին Կոստանդնուպոլսում հրատարակվող «Ազատամարտ» թերթում հրատարակվում է Կոմիտաս վարդապետի շահեկան մի այլ ուսումնասիրությունը՝ աճալն ունի ինքնուրույն երաժշտությունն վերնագրով, որտեղ քննության է առնված հայ ժողովրդի աշխարհիկ և եկեղեցական ինքնուրույն ազգային երաժշտություն ունենալու հարցը<sup>6</sup>: Իս սպառիչ պատասխան էր այն մարդկանց, որոնք ժխտում էին հայ ժողովրդի ազգային ինքնատիպ հարազատ երաժշտության որությունը:

Այդ հոդվածում Կոմիտասն ասում է. «Ենթե հայ ժողովրդը, ազգ ես և ինքնություն այնքան, որքան մյուսները, այդ ոչ

<sup>3</sup> «Արարատ», Մ 5, էջ 221—225 (հոդվածը մնացել է անավարտ):

<sup>4</sup> «Արարատ», Մ 3—4, էջ 111—118:

<sup>5</sup> «Աշակ», Քիֆլիս, 1905, Մ 65, էջ 88, էջ 2:

<sup>6</sup> «Աշակ», Մ 121, էջ 2:

որ կարող է հերքել: Ունեն հատուկ լինելու կիսուսնս: Ունեն հատուկ ուղեղ, կզատենս: Ունեն հատուկ մարդաբանական կազմ, որո՞ւմ կզատվիս այլ ազգերեն ու անոնց կազմեն: Սակայն սիրտք որ զզացմանցդ աղբյուրն է, քուկդ չէ եղբր, այլ մի ինչ-որ անորար-բյուրզանակաւն և հնգկա-պարսկական է եղերք:

Կոմիտաս վարդապետը հաստատեց նաև մեր եկեղեցական և ժողովրդական մեղօղիաների միջև գտնված սերտ առնչությունը: Այդ մասին նա Բեռլինից 1899 թվականին գրում է Կ. Կոստանյանին. «Քանի խորունկ եմ մտնում երաժշտական ծիծաղածին ծովի մեջ, նույնքան պնդվում է համոզմունքս, թե մեր ժողովրդական և եկեղեցական անմասն վեճ եղանակները, որոնք քույր և եղբայր են շատ վաղուց, ապագայում նույնպես օտարների համար ուսումնասիրության աղբյուր պետք է դառնան, որովհետև արմատը շատ խորը հնություն տանում հասցնում, այնտեղ նորախից անբաժան ծնում և նորա հետ մեկ հասնում»:

Կոմիտաս վարդապետը հազորդ ուսումնասիրության մեջ, նորից քննության է առել եկեղեցական և աշխարհիկ երգերի փոխհարաբերության հարցը և հասել հետևյալ եզրակացության. «Որպեսզի հնարավոր լինե՞ր նրանց կայք գտնել, ես հիմք դնեցի ժողովրդական երգերը, որովհետև նրանց ինքնուրույնությունը անժխտելի էր: Եկեղեցական եղանակները, դատելով նրանց արտաքին կազմությունից, որը ոչ միայն բարդ, այլ զանազան տեղերի համեմատ զանազան գույն և ձևափոխություն ունեն, թվում էր օտարամուտ, նրանք մոտ էին թուրք եղանակներին, Միևնույն ժամանակ նրանք սերտ առնչություն ունեին մեր ժողովրդական երգերի հետ: Ուրեմն մեր հոգևոր երաժշտության աղբյուրը պիտի լինեին կամ առաջինները, կամ երկրորդները, եվ որովհետև պարզ տրամաբանությունն ինձ ասում էր, որ մեր եկեղեցական եղանակները պետք է ավելի մեր ժողովրդի ստեղծագործության մոտ լինեին, ուստի ամբողջ ջանքս լարեցի դեպի այդ ուղղությունը:

Շփոթեցնող կետն այն էր, որ մեր ժողովրդական երգերը պարզ կազմ ունեին, նվազ զարդարված էին, քան եկեղեցական եղանակները:

Այդ հանելուկի բանալին ինձ պիտի տաին այն եկեղեցական եղանակները, որոնք ավելի պարզ էին, եվ երկար որոնումներից հետո գտա այնպես եղանակներ, որոնք երկու տեսակ են երգվում, ծանր և թեթև:

Այս երգերը կոչվում են տոնական, Մանր նման էր գեղգեղանքներով թրքականին, իսկ թեթևը իր պարզությամբ ժողովրդականին: Մերկացնելով ծանրերի գեղգեղանքները, նկատեցի որ նրանք իրենց խորքով նման են թեթևներին:

Ուրեմն սրանից հստակ երևում է, որ այս պարզ եղանակները զարդարվել էին թրքական ռեճով, նրանց հանդիսավորություն և շուք տալու դիտավորությամբ, էրբ մենք շունեինք քաղմաձայն երգեցողություն»:

Կոմիտաս վարդապետը 1914 թվականին մեր եկեղեցական երաժշտության կրած ազդեցությունների մասին Փարիզի կոնգրեսում կարդացած իր դասխոսության մեջ ասում է. «Օտար երաժշտություններից, թուրքականն է ու պարսկականը, որ մասնավորապես ազդած են մեր եկեղեցական երաժշտության վրա, առաջինը՝ Հայաստանի մեջ՝ որ բավական երկարատև են ի վեր թուրքերու տիրապետության տակ կգտնվի, երկրորդը՝ Արևելյան Հայաստանի մեջ, որ Ռուսիո կցվելու առաջ անկախության կորուստի վեպ՝ կգտնվի Պարսկաստանի տիրապետության տակ, քրդական երաժշտությունը հայ երաժշտության վրա սկսած է ազդել հետևյալ կերպով:

Հայոց մեջ հին ժամանակներն ի վեր սովորություն է եկեղեցական երգեր երգել ընտանեկան հանդեսներու միջոցին:

Թուրքիո մեջ տիրացուները, այսինքն եկեղեցվո երգիչները, որ կերթալին երգել մեծատուններու խնջույքներուն, հայ երգչսկսան զարդարել թրքակերպ զունավորմաներով, հաճելի ըլլալու համար այդ մեծատուններուն, որովհետև հայ եկեղեցական երգը իր ազնիվ ու մաքուր նկարագրով կոչնականներ զվարճացնելու ընույթ լուռի, և այդ մեծատունները Հայաստանեն հեռու Կոստանդնուպոլիս կամ ուրիշ մեծ քաղաքներու մեջ քիչ մը թրքական քաղաքակրթությունն ու բարքերը ընդգրկած էին, ինչպես հայ եկեղեցական երաժշտությունը տակավառ տակավ մեծ քաղաքներու մեջ, իր մաքրությունն ու ազգային նկարագրեն բան մոկորանցուց և թրքական մեղկությունն ստացավ:

Մեծատուններու հացկերույթներում, այդ արափոխումը փոխադրվեցավ եկեղեցիներու մեջ...:

... Եկավ ժամանակ մը, որ այդ երգիչները կորսնցուցին մինչև իսկ ազգային ձայնատվությունը և ընդգրկեցին թրքաց սիրելի

\* Թ. Թևրիմեղյան, «Կոմիտաս ժողովածու», Երևան, 1930, էջ 88—90.

անգային, կոկորդային ձայնատվութունները և սկսան երգել թիֆ մեջեն, բերանը գոց, հեղդ, խուլ ձևով մը (Կոմիտաս վարդապետը երգում է տեղում և ներկայացնում թրքածն երգելու ձևը)։ Ահավասիկ դարձյալ ուրիշ օրինակ մը պիտի կրգեմ ձեզի, «Տիրամայր»-ը թրքակերպ խաթարման ձևով (.....)։ Անիկա խառնուրդն է թրքական հյուսիսի, շինազ, փասելիք, կյուլիզար, հրջազ, սֆահան և աշխտան կարգերուն (.....)։ Եվ ահավասիկ հայ ավանդական եղանակը, զոր ութ տարի առաջ գրի առած եմ շինական Տեղքահանայի մը բերնեն (....)։

Միևնույն րանը պատահած է Արևելյան Հայաստանի մեջ, այն տարրերությամբ, որ այնտեղ պարսկական երաժշտությունն է, ու իր աղջեցությունը կ'զործե մեր երաժշտության վրա։

Ահա օրինակ մը պիտի երդեմ ձեզի (.....)։ Եվ ահա նույն եղանակը իր զուտ հայկական ձևով (.....)։

... Ինձի պիտի հարցնեք, թե ինչպես գիտեմ, որ այդ եղանակները, զոր կենդակայանն իրը ճշմարիտ հայ ոճի օրինակներ, իրո՞ք այդպես են։ Պատասխանելու համար ձեզի, պիտի հիշատակեմ մեկ հատվածը ժժ դարու հայ նշանավոր, հմուտ երաժշտագետ Անանիա Շիրակացիի, որ իր «Յաղագս ձայնից» գործին մեջ կ'գրե. «Հայ եկեղեցվո շարականներուն մեջ, խոսքերը ավելի պետք է գրավեն ունկնդիրներու ուշադրությունը, քան երաժշտությունը», այսինքն թե շարականները հղացված էին իրր տեսակ մը ունկնդրութիւլ (թվերգություն) երգելու համար։

Հայտնի է ուրեմն, թե այդ քոյր անօգուտ հարգարանքները, որ շարափոխած տարրերակներու մեջ կ'ծանրաբեռնեն շարականները, օտարամուտ են։ Տաղերու մեջ, կրսի Անանիան, «Երաժշտությունը պետք է գերակշռե, քայց առանց խոսքերուն իմաստը խեղդելու...»։ «Տիրամայր»-ի մեջ երաժշտական ընդլայնումը խոսքերուն իմաստն ընամյ չի հեռանար, զայն հավատարմությամբ ու զորությամբ արտահայտելու միայն կ'ծառայի։ ... «Տիրամայր»-ին մեջ եղանակը կարտահայտե Աստվածամոր վիշտը, կ'վերարտագրե անոր հեկեկանքներն ու հծծյունները։

Ուրիշ հայ հեղինակ մը, մեծանուն Համամ Արևելցիին (Ժ դար), կրսե. «Եկեղեցական երգերը պետք է երգել ոչ թե ձգձգված ձևով մը, այլ աշխուժ ձևով մը։ Պետք չէ ձայնը հանկարծ շատ րարձր հանել, կամ շատ ցած իջեցնել, որովհետև անիկա կրնա ազոթթիս վհուկությունը խանգարել...»։

Քայց կենդանի ապացույցը ես գտա այն իրողության մեջ, որ այն եկեղեցական եղանակները, զորս ես գլուղբրու և հին վանքերու խորը հավաքեցի իրենց նախնական ձևին

մեջ, կհայտնվին համանման ժողովրդական երգերուն, որ հայ գեղջուկին անվիճելի ինքնահատուկ ստեղծագործություններն են։

... Մեր եկեղեցական երաժշտության և ժողովրդական երգերուն մեջ, երբեք չկա տվելորդ և անկապակից գունավորումներ...։

... Հայ ժողովրդական երաժշտության վրա օտար երաժշտություններ շատ քիչ աղջեցություն ունեցած են, որովհետև ժողովուրդը թրքական եղանակ մը թրքերին խոսքերով կ'երգե, պարսկական եղանակ մը պարսկերեն լեզվով, քրդական մը՝ քրդերեն լեզվով և այլն, ու երբեք օտար եղանակ մը հայերեն խոսքերով...»։

Այս գաղափարների լույսի տակ, Կոմիտաս վարդապետը միջոցներ որոնեց և ձևանամուխ եղավ մեր եկեղեցական երաժշտությունը աղավաղումներից փրկելու գործին։

Այդ մասին նա Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսին գրում է 1910 թվականի հունվարի 10-ին. «Երևան ազգային եղանակները հոգեշունչ, պարզ ու վե՛նձ շարականի երաժշտությունը, որ մեր նախնայաց նախանձեի հոգուն պատկերներն ու հայելիներն են, որոնք մշտամրմունջ էին, այժմ դասապարտվել են արհամարհների, կորստի և նախատինքի, ավելին կսուսի՛, տանում են մեր սիրտն ու հոգին զեպի խեղդող օտարական ճանապարհներ։ Եթե վերջին նշույլն էլ, որ մնացել է, մենք փչե՛նք ու հանգչե՛նք, այն ժամանակ մեր աչքով կտեսնենք մեր սրտի քախումբը, ապա ուրեմն և մեր կյանքի դոյության վառարանի հայելիները»։

Նույն նամակում Կոմիտաս վարդապետը բացատրում է նաև շարականների եղանակների աղավաղման պատճառները։ Նա գտնում է, որ «անխտրի նախատեսակները, «Հանգրստյան շարք», «Երազած» շարք», «անտեղի ճոխացումները ձանձրույթ են պատճառում հավատացյալներին, նա ասում է շարունակության մեջ. «Յուրաքանչյուր մարդ, որքան էլ չբեմեռանդ, որքան էլ բարի քրիստոնյա լինի, չի կարող մարսել միանգամից այդքան խառնաշփոթ կերակուր։ Եթե երաժշտությունը, սրի դիրն է կրթիլ և ազնվացնել, հոգևոր երաժշտական զգացմունք փչելով հավատացյալի հոգու ու սրտի վրա, անպատակահարմար մատակարարությամբ բաշխվի, անշուշտ անկումն կպատրաստե և կխորտակե սրտի քնքուշ լարերը և կկտրե, կանջատե սիրտն ու հոգին, որոնք անբաժան պորժոն եղբայրներ են երաժշտության միջոցով մեր կյանքի մեջ»։

Այստեղ նա տասը կարևոր միջոցներ է տուաչարկում մեր եկեղեցական եղանակները աղավաղումներից փրկելու համար։

Պահպանված է մեկ ուրիշ զեկուցագիր ուղղված նորից Մատթեոս Ի կաթողիկոսին, 1910 մայիս 12 թվակիր, որտեղ ասում է.

«Այժմ շարականները անարգությամբ նսեմանում են, շարականագետներն օրավուր նվաղում են և փոխարենն աճում են թերուս ու տգիտ, անփորձ և անյնորհք դպիրներն ու դպրագետներ, որոնք նախքան գտնասությունն երաժիշտ են և անուց անսանձ ու շահատակ կամայականութանն է հանձնված հայ ժողովրդի հոգևոր և պատասխանատու դաստիարակության գեղարվեստականը: Չեմ խոսում հոգևոր երաժուտության վեճ ու կրթիչ զերի մասին, այլ ամենաէական ուրվագծերով շեշտում եմ, թե ինչպես կարելի է վանել, ազդալին հոգևոց երաժշտության վերականգնությունից միջոցով, հայ-քրիստոնեի սանձ սիրտը և վերստին բորբոքել շերմեանդության թաքնված հուրը»:

Այս զեկուցագրի վերջաբանը ուշագրավ է, որտեղ ասում է Կոմիտաս վարդապետը. «Ես պատրաստ եմ, որպես ցայսօր իմ բոլոր ջանքերս ու հոգս նվիրել մի այնպիսի սուրբ գործին, որ ինձ ոգևորել է դեռ տղա տիոցս, սուրբ գործին, որ ինձ բաշել ու կապել է Մայր Աթոռին, սուրբ գործին, որ ինձ ուղիղ 20 տարի հույս է ներշնչել»:

Կոմիտաս վարդապետի ստեղծագործական աշխատանքը զգալի թիվ է ներկայացնում այսօր Կ. Կոստանյանին գրած իր մի նամակում նա խոսում է այն մասին, թե ինչք սիրով և համբերությամբ ձեռնամուխ է եղել մեր հոգևոր երգերի մշակման և դաշնավորման պատասխանատու աշխատանքներին: «Մեր հոգևոր երգերից մի քանի կտոր պատրաստել եմ քառածայն, վեց ձայն և ութ ձայն, ուսուցչապետս առաջարկեց երգել տալ, պատրաստում եմ մի քանիսն էլ»:

Ատորև բերում ենք Կոմիտաս վարդապետի եկեղեցական երաժշտության վերաբերյալ հրատարակված մշակումների ցուցակը.

1. «Ազգային օրհներգ» («Ամեն հայի սրտից բխած»), երաժշտություն Սողոմոն Սողոմոնյանի՝ ուսանող Ա յարանի ճեմարանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի (քառածայն խառն խմբի համար հայկական նոտագրությամբ), խոսքերը գրեց Արշակ Թաղլյան, ուսանող Գ յարանի ճեմարանի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Վաղարշապատ, 1891 թ., 1 էջ:

2. «Աղխարհիկ և հոգևոր խմբերգեր», Կոմիտաս վարդապետ, Փարիզ, 1906 թ. (նույն թվականին կայացած հանրածանոթ համերգի համար պատրաստված խմբերգերն են):

3. «Տէր ողորմեա», գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ (քառածայն խառն խմբի համար), «Ամենուն տարեցույցը», 1914 թ., 1 էջ:

4. «Ճաշու շարական Ս. Զատիկ»: Դաշնավորեց Կոմիտաս վարդապետ: «Ամենուն տարեցույցը», 1926 թ., էջ 444—447:

5. Կոմիտաս: Դաշնավորյալ երգեցողությունը Սրբոյ Պատարագի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո վասն միասնոարական խմբի, վերատեսյալ ի ձեռն վարդան Սարգսյանի, տպագրյալ արղյամբն Հայկազն Վարդանյանի, առ ի երախտագիտություն սիրելի ծնողաց յուրոց Կոստան և Թենտ վարդանյանի. հրատարակություն Ը. Սեմերճյանի, զարդագրություն Ռ. Շիշմանյանի, Փարիզ, 1933, 73 էջ:

6. «Հայ սրբազան երաժշտություն», տետր II, Կոմիտաս վարդապետի տաղք և ալելուր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո, ինչը խմբերգ վասն բազմաձայն երկսեռ խմբի, յոթ մեղեդի միաձայն, առանց նվագարանի: Հրատարակություն Կոմիտասյան հանձնաժողովի, զարդագրություն Ռ. Շիշմանյանի, Փարիզ, 1946—1947, 20 էջ: Խմբերգեր 1) Երգ զիշերային ժամու (բազմաձայն խառն խմբի համար), 2) Աղոթք տերունական (քառածայն խառն խմբի համար), 3) Երգ շրորհնեցի (քառածայն խառն խմբի համար), 4) Զրօրհնեք (տարբերակ), (քառածայն խմբի համար), 5) Զրօրհնյազ շարական (քառածայն խմբի համար), 6. Կանոն թաղման Տեառն (Հարց), (արական եռածայն խմբի համար), 7) Մեծացուցեք (քառածայն խառն խմբի համար), 8) Երգ Ուտնվայի, ա. (բազմաձայն խառն խմբի համար), 9) Չանձ Թ (քառածայն խառն խմբի համար): Զավելված. 1) Մարական կիրակնամտից (միաձայն), 2) Սուրբ Աստված Մեծի Ուրբաթու (միաձայն), 3) Սուրբ Աստված հորդոր (միաձայն), 4) Երգ առավոտյան ժամու (միաձայն), 5) Սրբասացություն Մեծի Հինգշաբաթի (միաձայն), 6) Երգ Կաթողիկե տոնի (միաձայն), 7) Օրհնություն պատարագի (միաձայն):

7. «Օրհնութիւն երից մանկանց», քառածայն խառն խմբի համար, դաշնամուրի ընկերակցությամբ Վ. Սարգսյանի (Երգացանկ «Արմենիա» երգչախմբի, խմբագրող Վ. Սարգսյան, Ա շարք, № 3<sup>1</sup> և № 3<sup>11</sup>, Փարիզ (6 էջ):

8. «Անձինք նուիրեալը», հրատարակություն Ռ. Աթայանի, «Էջմիածին», 1961 թ., № Բ:

Վերահիշյալ հրատարակված գործերից բացի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի Կոմիտասյան արխիվում կան

շուրջ 20 անտիպ եկեղեցական եղանակների մշակումներ, որոնք են.

1. «էջ Միածինն ի Հորէ», Ա տեսակ, քառածայն.
2. «էջ Միածինն ի Հորէ», Բ տեսակ, քառածայն.
3. «Սուրբ Աստուած» (յերեկոյի), քառածայն.
4. «Սուրբ Աստուած» (հաշի), քառածայն.
5. «Սուրբ Աստուած» (պատարագի), քառածայն.
6. «Օրհնութիւն երից մանկանց», բազմածայն.
7. «Օրհնութիւն երից մանկանց», քառածայն.
8. «Օրհնութիւն երից մանկանց», քառածայն.
9. «Օրհնութիւն երից մանկանց», եռածայն.
10. «Աշխարհ ամենայն», բազմածայն.
11. «Ալէլուիա Պատառակերպութեան»՝ «Լեբրինք ցնծասցեն», բազմածայն.
12. «Սրբասացութիւն նշնցեցոց»՝ «Վասն յիշատակի», քառածայն.
13. «Թարգմանչաց Մանկունք և Համբարձի»՝ «Նմանեալ Մովսէսի», քառածայն.
14. «Տէր ողորմեա», ԲԶ, Ա տեսակ, քառածայն.
15. «Տէր ողորմեա», ԲԶ, Բ տեսակ, բազմածայն.
16. «Ով զարմանալի», Ա և Բ տեսակ, քառածայն.
17. Մեղեդի Յարութեան»՝ «Սայլն այն իջանէ», միածայն.
18. «Նորահրաշ պսակաւոր» (կիսավարտ), քառածայն.

Կան նաև կիսավարտ մշակման բազմաթիվ էջերգներ, եկեղեցական երաժշտութիւնն ինքնաբերաբար:

Պահպանված են նաև Կոմիտաս վարդապետի հայկական նոտաներով ձայնագրումները էջմիածնի միաբանների երգած եղանակներով, որոնք, ըստ երևութիւն, էջմիածնում պահպանված հնագույն եղանակներից են: Այդպիսին է № 333 թերթիկը, որի վերնագիրն է «Օրհնութիւն հոնշտակապետաց Միքայէլի և Գաբրիէլի և ամենայն երկնային ոտար», շարական ԲԿ, ստեղծ եղանակ (Ս. էջմիածնի ի հին գոյն), ձայնագրեալ ի Յովակիմ վարդապետ Չամբեան Վարդապատուոյ ի 1887 ամի, ձեռամբ աշակերտ Ծղասարանի Գէորգեան Հոգևոր ճեմարանի Մայր Աթոռ Ս. էջմիածնի Սողոմոն Գէորգեան կուտինացոյ, ի Ս. էջմիածինս:

Մի ուրիշ ծրարի վրա կարգում ենք. «Հոգևոր եղանակներ. հավաքեք Սողոմոն սառ-

կավագ Սողոմոնյանը, Կուտինայում, 92/24/Ղ: Սա բովանդակում է 9 զանազան հոգևոր երգեր, իր ծննդավայրի ավանդական եղանակներով:

№ 332 ծրարի վրա գրված է. «Հոգևոր եղանակներ, հավաքեք Սողոմոն սարկավագ Սողոմոնյանց, միաբան Ս. էջմիածնի, 1893 (24)Գ», Տետրում կան 14 հոգևոր եղանակներ հայկական ձայնագրութիւնով: Կոմիտաս վարդապետը ձայնագրել է Ղևոնդ վարդապետ Հովակիմյանի և Գևորգ արեղա Արքայանի Ռշտունու երգած էջմիածնական հին եղանակներից մի քանի ծանր «Տէր ողորմեա»-ներ, գրված մեր Եկեղեցւոյ մի քանի ձայների հիման վրա, «Քաց մեզ Տէր», վասն սուրբ տեղույս շինութեան» և այլն զանազան եղանակներ:

Մի այլ ծրարում պահպանված են հայկական ձայնագրութիւնով երեք մեղեդիներ՝ «Մարիամ Մակտաղինէն» (Յարութեան), «Համեմատ քեզ» (Աստուածածնի), և «Ի գերեզման յարուցելուն» (Յարութեան), ձայնագրեանակ, Այս մեղեդին երգել է Գառնակերանը, ձայնագրել է Կոմիտաս վարդապետը, ներկա ձեռագիրը արտագրված է Ս. սարկավագ Մելիքյանի ձեռամբ:

Պահպանված են նաև միածայն և եռածայն հայկական ձայնագրութիւնով մի քանի շարականներ, ինչպես «Որ զանարատ բազուկս քո» (հաշի շարական), «Բանն որ ընդ Հոր էութեան» (Մեծի Պահոց Ա շարաթու շարական) և այլն և այլն:

Կոմիտասյան եկեղեցական երգեցողութիւնն ժառանգութիւնը չի սահմանափակվում վերոհիշյալ նմուշների մշակումներով, նրա գործերի զգալի մասը մեզ չի հասել, ինչպես օրինակ բազմաձայնած յոթը տեսակ պատարագները<sup>1</sup>, Այսօր այդ պատարագներից միայն արական խմբի համար գրած պատարագի սեպիր օրինակն է, որ հասել է մեզ և շնորհիվ իր հմուտ աշակերտ Վարդան Սարգսյանի ջանքերի, սրբագրվել է այն և տպագրվել:

Կոմիտաս վարդապետից մեզ հասած եկեղեցական և ժողովրդական բոլոր մշակումներն էլ լի են, լինեն գրանք հրատարակված թե անտիպ, գեղարվեստական բարձր արժեքով: Այդ մշակումները գեղարվեստական ամբողջութիւն են ներկայացնում. գրանցում ներդաշնակութիւնը բովանդակութիւնից

<sup>1</sup> Կոմիտաս վարդապետը 1909 թվականին Ս. էջմիածնի Հայր Ղևոնդ Տալանի ուղղած նամակում գրում է. «Հայկական պատարագ ունեմ 7-ը տեսակ բազմաձայն դաշնակառ. բայց չէ տպված»:

բխելով, մեկը մյուսին լրացնելով, խորանում և նոր որակ ու բովանդակություն են ստեղծում:

Կոմիտաս վարդապետը ընդհանրապես երգի մշակմանը մոտենում էր ստեղծագործաբար, ոչ թե վերարտադրելով կրկնում էր տվյալ կերպարները, այլ նոր գույն էր ավելացնում, խորացնում բովանդակությունը և էությունը:

Այս բոլորը վկայում են Կոմիտաս վարդապետի ստեղծագործ տաղանդի և ազգային արվեստին խորամուտ լինելու նրա բացառիկ կարողության մասին:

Կոմիտաս վարդապետը, իր հանճարի ամբողջ մեծությամբ, հրաշքի նման երևաց մի օր հայ իրականության մեջ, ցնցեց ամբողջ արևելյան երաժշտական աշխարհը իր բերած նոր հրաշալի ներդաշնակումներով, որոնք մեր ժողովրդի հոգեկա՛ն արժեքների գանձարանում խոր թաքնված էին մնում, այդ բոլոր

արժեքները սպասում էին տաղանդ և ներշնչում ունեցող սրբազան անձնավորության: Այդ հրաշք-մարդը եղավ Կոմիտաս վարդապետը:

Կոմիտասյան մշակումները իրենց ինքնատիպ հայեցողությամբ և ներդաշնակության ամենանուրբ և գերազանց ճաշակի իրրև հույակերտ պատկերներ, իրենց բովանդակության մեջ են լցնում հայ ստեղծագործ միտքը և հոգին ամբողջությամբ, որոնք ազնվացնում և վերացնում են մարդու ներքին աշխարհը, և որպես ազգային արժեքներ, հպարտության մեջ են լցում մեզ:

Վերջինից ամսագրի սույն համարում տպվել է արդեն վերջերս Փարիզից ստացված մի նշխար ևս Կոմիտաս վարդապետից՝ «Այսօր կանգնեցաւ աւազան մկրտութեան» (տե՛ս էջ 45), իսկ հաջորդ համարներում հրատարակելու ենք Կոմիտաս վարդապետի հոգևոր երաժշտության վերոհիշյալ անտիպ էջերը:

